

ՏԵՂԵԿԱՆՔ

ՆԱԽԱԳԻԾ
Պ-554²-09.04.2020-ՖԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

**«ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ԿՐԵՂԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
~~ԼՐԱՑՈՒՄ~~ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» 2017 թվականի հոկտեմբերի 25-ի ՀՕ-182-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածում ~~լրացնել նոր 7.1-ին մաս~~։

~~«7.1 Սույն հոդվածով սահմանված հաղորդակցման կարգը չի գործում Հայաստանի Հանրապետությունում արտակարգ (ռազմական) դրության դեպքում: Արտակարգ (ռազմական) դրության դեպքում կրեդիտավորողն իր պաշտոնական ինտերնետային էջում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում (դրա առկայության դեպքում), իսկ դրանց անհնարինության դեպքում՝ հանրային հեռուստատեսությամբ կամ ռադիոյով կարող է իր ծառայությունների կամ դրանց մի մասի կամ բոլոր կրեդիտառուների կամ կրեդիտառուների որոշակի խմբի մասին հայտարարություն հրապարակել՝ որոշում կայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Հայտարարությամբ պայմանավորված փոփոխությունների մասին կրեդիտառուի հետ հաղորդակցումն իրականացվում է բանկի սահմանված միջոցներով և ժամկետներում:»:~~

1. 3-րդ մասում «վոստային» բառը փոխարինել «էլեկտրոնային» բառով.

2. 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4. Կրեդիտառուն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով, ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկատվությունը և (կամ) 2-րդ մասով սահմանված քաղվածքը էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ տեղեկատվությունը և (կամ) քաղվածքը փոստային կամ կապի այլ միջոցներով կամ կրեդիտավորողի տարածքում ստանալու պայմանով: Տեղեկատվությունը և (կամ) քաղվածքը փոստային կամ կապի այլ միջոցներով կամ կրեդիտավորողի տարածքում ստանալու՝ կրեդիտառուի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է: Կրեդիտավորողն իրավունք չունի կրեդիտառուին պարտադրելու, այդ թվում՝ կրեդիտառուի համար ոչ բարենպաստ իրավիճակ ստեղծելու, որ կրեդիտառուն հրաժարվի սույն հոդվածով սահմանված տեղեկատվությունը և (կամ) քաղվածքը էլեկտրոնային կապով ստանալու իր իրավունքից:

Ընդ որում՝ կրեդիտառուն իրավունք ունի իր գրավոր դիմումով միակողմանի փոփոխել հաղորդակցման միջոցը ոչ ավել, քան տարին մեկ անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը կրեդիտավորողի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման վրա:»:

3. 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ

«5. Սույն հոդվածով սահմանված տեղեկատվության ներկայացման կարգը չի գործում Հայաստանի Հանրապետությունում արտակարգ կամ (ռազմական) դրության դեպքում: Արտակարգ կամ (ռազմական) դրության դեպքում կրեդիտավորողն իր պաշտոնական հնտերնետային էջում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում (դրա առկայության դեպքում), իսկ դրանց անհնարինության դեպքում՝ հանրային հեռուստատեսությամբ կամ ռադիոյով կարող է իր ծառայությունների կամ դրանց մի մասի կամ բոլոր կրեդիտառուների կամ կրեդիտառուների որոշակի խմբի մասին հայտարարություն հրապարակել՝ որոշում կայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Հայտարարությամբ պայմանավորված փոփոխությունների մասին կրեդիտառուի հետ հաղորդակցումն հրականացվում է կրեդիտավորողի սահմանված միջոցներով ու ժամկետներում:»:

Հոդված 2. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2) կրեդիտառուի իրավունքի խախտման հետևանքով կրեդիտառուն փաստացի չի կրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված իրական վնաս, իսկ այդպիսի վնաս կրելու դեպքում այն փոխհատուցել է կրեդիտավորողը:»:

~~Հոդված 32. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը և տարածվում է 2020 թվականի մարտի 16-ի դրությամբ և դրանից հետո գոյություն ունեցող հարաբերությունների վրա:~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը և տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրը և դրանից հետո կնքված պայմանագրերի վրա, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի:
2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը և տարածվում սույն օրենքի ուժի մեջ մտնելու դրությամբ գործող այն իրավահարաբերությունների վրա, որոնց հետ կապված կրեդիտառուների կողմից այդ հոդվածով նախատեսված դիմումները ներկայացվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:
3. Սույն օրենքի 1-ին հոդվածի 3-րդ կետն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ին: